«ՀԱՏՈՒԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ», ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

1988 թ. սկսվեց Արցախյան շարժման նոր փուլը, Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի փետրվարի 20-ի պատմական նիստի որոշումից, որը ունեցավ պայքարի տարբեր ենթափուլեր: Դրանցից յուրաքանչյուրը ունեցավ առանձնահատուկ նշանակություն Արցախի ազատագրման ու պետականության վերականգնման գործում: Այդպիսի մինչև այժմ համեմատաբար չուսումնասիրված կամ նվազագույն չափով լուսաբանված ենթափուլերից է ԼՂԻՄ-ում «Հատուկ կառավարման կոմիտեի» գործունեության շրջանը: Անկախ «Հատուկ կառավարման կոմիտեի» գործունեությունից, նրա թույլ և ուժեղ կողմերից, նրա նկատմամբ ունեցած գնահատականից անվիճելի պատմական ճշմարտություն է, անժխտելի քաղաքական փաստ, որ Կոմիտեի ստեղծումը ոչ թե Գորբաչովյան Կրեմլի «շնորհն» էր հայ ժողովրդին, այլև նրա պայքարի արդյունքը, որը հարկադրեց «վերակառուցման» տխրահռչակ հեղինակներին լսել հայ ժողովրդի ձայնը, Արցախյան հիմնահարցի «սպիտակ էջերը» դուրս բերել «փակ գոտուց» ու դարձնել հրապարակային քննարկման առարկա:

1989թ. հունվարի 11-ին Մոսկվայում Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների խորհրդակցության ժամանակ քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի հետ առնչվող հիմնախնդիրներ: Խորհրդակցությանը մասնակցում էին Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ-ների կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարներ Ս.Գ. Հարությունյանը, Ա.Ռ.Խ. Վեզիրովը, Գերագույն խորհուրդների նախագահությունների նախագահներ Հ.Մ. Ոսկանյանը և Ս.Բ. Թաքլինը, նախարարների խորհուրդների նախագահներ Ֆ.Տ.Սարգսյանը, Հ.Ն. Սեիդովը, կոմկուսների կենտկոմների երկրորդ քարտուղարներ Յու.Պ. Կոչետկովը և Վ.Պ. Պոլյանիչկոն:[1]

Քննարկվեցին տարածաշրջանի իրադրության կարգավորման, կայունացման հետ կապված բազմաթիվ հարցեր: Նշվեց, որ իրավիճակի անկայունությունը ակտիվ անհետաձգելի ձեռնարկում է պահանջում: Այդ առնչությամբ քննության առնվում երկու «եղբայր» ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունների նորմալացման, նրանց ավանդական կապերի ու բարեկամության վերածնման նպատակով գործողությունները կոորդինացնելու կոնկրետ առա-

[1] Տես «Սովետական Հայաստան», 12 հունվարի 1989 թ.

ջարկությունները: Ընդգծվեց տարբեր մակարդակներում Ադրբեջանի և Հայաստանի կուսակցական, խորհրդային, տնտեսական մարմինների, հասարակական կազմակերպությունների շփումների կարգավորման անհրաժեշտությունը:[2] Խորհրդակցությունը վկայեց, որ երկու հանրապետությունների ղեկավարությունը կամ հստակ չի պատկերացնում ազգային-քաղաքական գործընթացները, չի տիրապետում ստեղծված իրադրությանը կամ էլ ցանկանում է հին արդեն իր դարը ապրած «եղբայրության» և «բարեկամության» քաղաքական կարգախոսներով մասին վերականգնել ու պահպանել նախկին հարաբերությունները երկու հանրապետությունների միջև: Նրանք պարզապես «մոռանում էին», որ Սումգայիթի ոճրագործությունից հետո ստեղծվել է սկզբունքորեն, որակապես նոր իրադրություն, որը պահանջում է նոր մոտեցումներ և կտրուկ քայլեր:

Այդ նույն օրը տեղի ունեցավ նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստ, որտեղ քննարկվեց ԼՂԻՄ-ի հարցը: Ընդունվեց հրամանագիր՝ «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կառավարման հատուկ ձև սահմանելու մասին»: Դրա առաջին կետի համաձայն՝ ԼՂԻՄ-ը թողնվում էր Ադրբեջանական ԽՍՀ կազմում: Դժվար չէ կռահել, որ ԽՍՀՄ կուսակցական-պետական ղեկավարությունը շարունակում էր ամեն գնով պահպանել ԽՍՀՄ-ում քաղաքական ստատուս քվոն՝ տարածքային ամբողջականությունը, որը առարկայապես նպաստում էր Ադրբեջանի շահերին: ԽՍՀՄ ղեկավարությունը չէր ցանկանում հաշտվել տեղի ունեցող գործընթացների հետ, իրատեսորեն մոտենալ հիմնախնդրին, համոզված լինելով, որ կհաջողվի ուժով, բռնաճնշումներով (իրավական) տեսք հաղորդել իրենց որոշումներին: Նրանք շարունակում էին կառչել «վերակառուցումը վերածնում չէ» շատ կասկածելի կարգախոսին, որը իբր հակասում էր խորհրդային երկրի ժողովրդների բարեկամությանը: Երկրորդ կետում նշված էր, որ «Հատուկ կառավարման կոմիտեն» ենթարկվում է անմիջականորեն ԽՍՀՄ պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին, լրիվ ծավալով օժտված էր ինքնավար մարզի ժողովրդական պատգամավորների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորություններով, իսկ կոմիտեի նախագահը՝ ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի իրավունքներով ու պարտականություններով»:[3] ԼՂԻՄ 20-րդ գումարման ժողովրդական պատգամավորների խորհրդի լիազորությունները դադարեցվում էին մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը: Կոմիտեի վրա էին դրվում տեղական պետական իշխանությունների և Լեռնային

---

[2] Տես նույն տեղում:
[3] Տես "Правда", 15.01.1989.

Ղարաբաղի Ինքնավար Մարզի ղեկավարումը, ինչպես նաև ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի լիազորությունները: Մարզի բոլոր մշակույթային, լրատվական, հրատարակչական, կրթական և այլ մարմիններ պետք է ենթարկվեին կոմիտեի ղեկավարին կամ նրա ներկայացուցչին, իսկ դատարանն ու դատախազությունը՝ ըստ ենթակայության: Մարզի տնտեսությունը նույնպես մնում էր Ադրբեջանից կախվածության մեջ, որը երևում էր հրամանագրի ձևակերպումից: Ըստ դրա՝ մարզի տարածքում գտնվող միութենական և հանրապետական ենթակայության ձեռնարկությունները, հիմնարկություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև դրանց մասնաճյուղերը, ստորաբաժանումներն ու մյուս կառուցվածքային ստորաբաժանումները կոմիտեին ենթարկվում էին այն հարցերում, որոնք որոշում էր ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը՝ հաշվի առնելով Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդի կարծիքը: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը հանձնարարվում էր «հրահանգից բխող համապատասխան որոշումներ» ընդունել: Սահմանվում էին ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի իրավունքներն ու պարտականությունները: Հրամանը պետք է կիրարկվեր 1989 թ. հունվարի 20-ից: Հաստատվեց Հատուկ կառավարման կոմիտեի կազմը՝ բաղկացած ութ հոգուց: Կոմիտեի նախագահ հաստատվեց Արկադի Վոլսկին:[4] «Հատուկ Կոմիտեում» Վոլսկու հետ Ղարաբաղում պիտի աշխատեին միութենական հիմնարկների մի շարք պատասխանատու աշխատողներ, ինչպես կենտկոմից՝ Վ. Սիդորովը, կենտխորհրդից Վ. Միշինը, Ներքին գործերի մինիստրությունից՝ գեներալ-մայոր Ս.Կուպրեևը, մինիստրի տեղակալ Վ. Պլիսովը, երեք հոգի էլ մարզից՝ մարզգործկոմի նախագահ Ս.Բաբայանը, մարզի ժող.վերահսկողության կոմիտեի նախագահ Վ.Թովմասյանը և Շուշվա կուսշրջկոմի քարտուղար Վ.Զաֆարովը: Մի քանի օր անց կուսակցության ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Հ.Պողոսյանը պաշտոնից ազատվեց՝ «առողջական վիճակի պատճառով»:[5] Չի կարելի ասել, թե Հատուկ կոմիտեն Ղարաբաղում կազմավորվեց միանգամից. այս կամ այն պետական կուսակցական այրերի չար կամ բարի կամքով: Դեռևս 1988-ի մարտին ակադեմիկոս Անդրեյ Սախարովը և պահանջում էր, որ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն իր ձեռքը վերցնի հարցի լուծման նախաձեռնությունը: Ավելին, նա առաջարկեց ապահովել մարզի ինքնավարությունը՝ չտալ այն ոչ Հայաստանին, բայց չթողնել Ադրբեջանի կազմում[6]: 1988թ. հուլիսի 18-ին ԳԽ-ի

---

[4] Տես "Известия", 21.01.1989

[5] Տես «Խորհրդային Ղարաբաղ», 9.02.1989

[6] Տես Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան 1994թ. էջ 298:

նախագահության նիստում բանաստեղծ Ռասուլ Համզատովը հանդես եկավ համանման առաջարկությամբ:

Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Արկադի Իվանովիչ Վոլսկին 1988թ. մարտից, իբրև ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ, ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Մ.Ս.Գորբաչովի հանձնարարությամբ զբաղվում էր Ղարաբաղի արդյունաբերական և առհասարակ տնտեսական առաջնահերթ խնդիրների լուծման հարցերով:

Հրամանագրի հրապարակման հետ միասին Կոմկուսի գլխավոր պաշտոնաթերթ «Պրավդայում» հրապարակվեց Ա.Վոլսկու «Խաղաղություն Ղարաբաղի հողին», ծավալուն հոդվածը, որտեղ Հատուկ կառավարման կոմիտեի նախագահը փորձում էր հիմնավորել Լեռնային Ղարաբաղում կառավարման հատուկ վարչաձև մտցնելու անհրաժեշտությունը՝ պնդելով, թե իբր այն բխում է Ղարաբաղի, Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդների շահերից: Ա.Վոլսկին կոչ էր անում ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը, հեռու մնալ ազգայնական գաղափարախոսությունից և քարոզչությունից, որը սոսկ անձն կարգախոս էր և ըստ էության ուրիշ ոչինչ, քանզի Արցախյան հիմնահարցը շարունակվում էր դիտարկվել որպես զուտ տնտեսական խնդիր: Եվ օրինաչափ էր, որ նա խոստանում էր զարգացնել Ղարաբաղի տնտեսական կապերը Հայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Ուկրաինայի և մյուս հանրապետությունների հետ, զարկ տալ մարզի տնտեսությանն ու մշակույթին: Նա շեշտում էր, որ Ղարաբաղի կյանքի արմատական հարցերը կարող են լուծվել միայն մարզի բնակչության ուժերով: «Մարզն ինքնուրույն կլուծի այն ամենը, ինչ որ նա կարող է լուծել՝ կադրային հարցերից մինչև ինքնաֆինանսավորումը»: Ա.Վոլսկին Մոսկվայից գալով Ղարաբաղ, հունվարի 26-ին մեկնեց Բաքու՝ հանդիպելու Ադրբեջանի ղեկավարության հետ և ներկայացնելու ԼՂԻՄ-ում իրավիճակը նորմալացնելու, կայուն աշխատանք ապահովելու և արմատական տնտեսական բարեփոխումներ իրագործելու խնդիրները: Քննարկվեց նաև փախստականներին իրենց բնակավայրերը վերադարձնելու հարցը[7]: Բաքվից վերադառնալով՝ Ա.Վոլսկին հունվարի 28-ին մեկնեց Երևան և Հայաստանի ղեկավարության հետ հանդիպման ժամանակ քննարկեց Ղարաբաղում ինքնուրույն տնտեսավարկով աշխատող միավորումներ ստեղծելու հարցը, որում կարևոր դեր պետք է ունենային կուսակցական և պետական մարմինները:[8] Փետրվարի 6-ին Ա. Վոլսկին հանդիպելով Ստեփանակերտի կոշիկի ֆաբրիկայի աշխատողների հետ՝ հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը կլուծվի փուլ առ փուլ, աստիճանաբար: Իսկ դրա

---

[7] Տես "Правда", 27.01.1989.
[8] Տես նույն տեղում:

առաջին և խոշոր քայլն աշխատելն է:[9] Դրանից հետո մի հարցազրույցում նա նշեց, որ հայերի ու ադրբեջանցիների համար շատ ավելի վատ կլիներ, եթե հատուկ դրություն չմտցվեր: Ըստ նրա՝ պետությունն այլ ելք չուներ:[10] Հարկ է նշել, որ Արցախում Հատուկ կոմիտեի ստեղծման հանդեպ վերաբերմունքը միանշանակ չէր: Այսօր, քսան տարի անց կարելի փաստել, որ նրա հանդես գալը միանշանակ ծեռնտու էր արցախցիներին թե քաղաքական, թե տնտեսական, թե ազգային տեսանկյունից: Պատահական չէ, որ Ադրբեջանը սվիններով ընդունեց այդ որոշումը, քանի որ հրաշալի հասկանում էր, որ Արցախի անկախացման գործընթացում դա հենց առաջին օրինաչափ քայլն էր, որ արվեց խորհրդային ղեկավարների կողմից:

Կոմիտեի ստեղծումից ամիս էլ չէր անցել, երբ Վոլսկին Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ Վ.Մարգարյանցին տեղեկացրեց ԼՂԻՄ-ի պատմամշակութային հուշարձանների վիճակի, նրանցից շատերի վերականգնման անհրաժեշտության մասին: Խնդիր էր դրվում, որպեսզի հուշարձանների ուսումնասիրության գործին լծվի Հայաստանի Գիտությունների ակադեմիան, վերակառուցման գործերը կատարվեն Երևանի մասնագիտական կազմակերպությունների գլխավորությամբ:

Սովորաբար որևէ երկրի ինքնուրույնության կարգավիճակի մասին դատում են տնտեսության ու բյուջեի նկատմամբ նրա ունեցած իրավունքով: ԼՂԻՄ-ն ինքն էր որոշում իր տնտեսության խնդիրները, ֆինանսավորումը գալիս էր ուղիղ Մոսկվայից: Հարկ էր նշել, որ ԼՂԻՄ-ը ԽՍՀՄ պետպլանում 15 հանրապետությունների հետ զբաղեցնում էր 16-րդ տեղը[11]:

Լեռնային Ղարաբաղում Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումով ի հայտ եկան կյանքի աշխուժացման որոշ նշաններ, մանավանդ կոոպերատիվների գործունեության բնագավառում: Կոմիտեն աշխատում էր ունենալ տնտեսության յուրաքանչյուր ոլորտի և սոցիալական զարգացման հստակ գործողությունների ծրագիր: Քայլեր էին ծեռնարկվում մարզում ստեղծելու նրա նյութատեխնիկական մատակարարման տարածքային մարմին, որը պետք է ուղիղ ենթարկվեր ԽՍՀՄ պետմատին:

Երկու ամիս անց կոմիտեն ավելի ընդարձակեց Լեռնային Ղարաբաղում կատարվելիք աշխատանքների ծրագիրը: Ա.Վոլսկին հայտարարեց, թե Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի աշխատողները կմտնեն Հայաստանի թատերական գործիչների միության մեջ, կկազմակերպվի կոմպլեքսային հնագիտական վերականգնիչ արշավախումբ, որը կգբաղվի

---

[9] Տես "Социалистическая индустрия". 30.04.1989.
[10] Տես «Խորհրդային Ղարաբաղ» 24.03.1989:
[11] Տես Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան 1994. էջ 300:

մարզի պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման աշխատանքներով, Ամարասի վանական համալիրը վերականգնելու միջոցներ կտրամադրվեն: Նաև հայտարարվեց, թե ԽՍՀՄ կառավարությունը թույլատրել է թթի օղու թորումը և արտահանումը, Ղարաբաղի գյուղատնտեսությունը ազատվում էր բոժոժի արտադրությունից, օրակարգ մտցվեց մսի կոմբինատի վերակառուցումը, ոչխարների գլխաքանակի շեշտակի նվազեցումը և այլն, որոնք բխում էին արցախահայության կենսական շահերից:[12]

Դա վատ ծրագիր չէր, սակայն մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համար տրված 400 մլն ռուբլին ծախսվում էր մարզի ադրբեջանաբնակ բնակավայրերում: ԼՂԻՄ-ում օր օրի ավելանում էին փախստականները: Արդեն 1989 թվականի փետրվարի սկզբի տվյալներով մարզում կային 11,5 հազար փախստականներ, որոնցից 8,5 հազարը՝ Ստեփանակերտում: Քաղաքի դպրոցներում արտասովոր ծանրաբեռնվածություն էր. մեկ դասարանում պարապում էին 60 երեխաներ, մանկապարտեզներում 2-3 երեխաների բաժին էր ընկնում 1 մահճակալ:[13]

Քաղաքային գրադարանը, երաժշտական դպրոցը և մշակույթի շատ օջախներ վատթար վիճակում էին: Հատուկ կառավարման կոմիտեի անդամ Վալերի Սիդորովը փորձում էր արցախցիներին համոզել, թե այդ ամենը կհարթվի, և որ մարզը պետք է հասնի լիակատար ինքնուրույնության, ինքը լինի իր կյանքի տերը:[14]

Արցախահայության համար չափազանց ծանր էր 1989 թ. և հաջորդ երկու տարիներին մտցված անձնագրային ռեժիմը: Միայն 1989 թ. հունվար-փետրվարին զանազան խախտումների և անձը պարզելու համար մարզում ուժային մարմիններ են տարվել տաս հազար մարդ[15]: Հայերին արգելվում էին մարզկենտրոնից մեկնել շրջաններ: Առանձնապես զանգվածային բնույթ էին ընդունել անասնագողությունը և հայերի ունեցվածքի հափշտակումները: Պլանավորված էր մարտի 9-ին Մոսկվայում անցկացնել ԽՍՀՄ Սինիստրների խորհրդի նիստ, որտեղ պետք է քննարկվեր ԼՂԻՄ-ի տնտեսության կառավարման կազմակերպության հետ կապված հարցը, սակայն այն վիժեցվեց Ադրբեջանի կողմից: Բաքվում և Ադրբեջանի մյուս քաղաքներում չէին դադարում հակահայկական հանրահավաքներն ու ցույցերը, որոնց հիմնական կարգախոսներն էին՝ «Հայեր, կորեք ադրբեջանական հողից», «Հայերը մեր թշնամիներն են» և այլն:

---

[12] Տես Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան 1994. էջ 300:
[13] Տես «Խորհրդային Ղարաբաղ», 24.03.1989:
[14] Տես «Գրական թերթ», 24.02.1989:
[15] Տես «Խորհրդային Ղարաբաղ», 08.03.1989:

Գորբաչովյան «վերակառուցման» շրջանում ազգային-ազատագրական շարժման վերելքի հետ միասին վերականգնվեց նաև Արցախի հոգևոր կյանքը: Արկադի Վոլսկու միջամտությամբ 1989թ. ապրիլից Արցախի եկեղեցիները գործելու իրավունք ստացան:

1989թ. մայիսին ադրբեջանական զինված ավազակախմբերը շարունակում էին անասնագողությունն ու կողոպուտները: Մինչդեռ Արկադի Վոլսկին հպարտանում էր, թե բոլորին զինաթափել են և առգրավել 3,5 հազար միավոր տարբեր տեսակի զենքեր: Բանն այն էր, որ մարզի հայերից վերցրել էին բոլոր որսորդական հրացանները, մինչդեռ ադրբեջանցիների զենքի մի չնչին մասն էին առգրավել: Ա. Վոլսկին նպատակ ունենալով արցախահայությանը հանգստացնել և Հատուկ կառավարման կոմիտեի համար հեղինակություն ստեղծել, հայտարարեց, թե որոշում է ընդունվել մարզում կառուցել 13 մլն ռուբլու արժողությամբ մարզային հիվանդանոց, թոքախտաբուժական դիսպանսեր և կարգավորել Ստեփանակերտի ջրամատակարարումը: Նաև ավելացրեց, թե ընթացիկ տարվա երկրորդ կեսին մարզը կանցնի տարածքային տնտեսական հաշվարկի, իսկ դրա համար պիտի կարողանալ ապահովել երկու ազգությունների հանգստությունն ու կյանքը և ամուր հիմքի վրա դնել մարզի բազմակողմանի զարգացումը:[16] Հատուկ կառավարման կոմիտեն սկսել էր համոզվել, որ արցախցիներն ունեն միայն մեկ գերխնդիր. կամ վերամիավորվել Հայաստանի հետ, կամ էլ ժամանակավորապես ենթարկվել Մոսկվային:

Հատուկ կառավարման կոմիտեն չկարողացավ և չէր էլ կարող երկու ժողովուրդների միջև վստահության կամուրջ հիմնել, քանի որ հանդիսանում էր Մոսկվայի կամակատարը և չէր կարող դուրս գալ նրա գծած շրջանակներից:

Ա. Գորբաչովը հունիսի 19-ին ընդունեց Լեռնային Ղարաբաղի մի խումբ պատասխանատու աշխատողների՝ Զորի Բալայանին, Վալերի Աթադանյանին, Մեմյոն Բաբայանին, Վահան Գաբրիելյանին, Վաչագան Գրիգորյանին, Մաքսիմ Միրզոյանին, Հենրիկ Պողոսյանին և Վլադիմիր Թովմասյանին: Ընդունելությանը ներկա էին նաև Ն.Ռիժկովը, Վ.Չեբրիկովը և Ա.Վոլսկին: Մ.Գորբաչովը խոստացավ մոտակա օրերին վերականգնել մարզխորհուրդը, որոշ ժամանակ անց՝ կուսակցության մարզկոմը, ինչպես նաև ընդլայնել Հատուկ կառավարման կոմիտեի իրավունքներն ու լիազորությունները: Սակայն Մ.Գորբաչովի խոսքը դարձյալ գործի չվերածվեց:

Մարզում օրի օրի ավելանում էր փախստականների թիվը, 1989 թ. հուլիսի 1-ին նրանց թիվը հասել էր 18525-ի:[17] ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի կուսակցական ապարատի 7 բաժինների վարիչների ու 26 պատաս-

---

[16] Տես "Коммунист", 3.05.1989.

[17] Տես Арутюнян В.Б. События в Нагорном Карабахе, ч.2, стр.87.

խանատու աշխատողների ստորագրությամբ հուլիսի 12-ին Մ.Գորբաչովին ուղարկված հեռագրում նշված էր, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի վճռման ձգձգումը հասցրել է իրավիճակի հերթական լարվածության՝ մարզը գտնվում է շրջափակման մեջ, զոհվում էին մարդիկ, ձեռնարկությունները ենթարկվում էին ջարդարարության և հրդեհման: Բանը հասել էր նրան, որ Շուշիում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ որոշում էին ընդունել հայերին արտաքսել Լեռնային Ղարաբաղից: Հեռագրի հեղինակները պահանջում էին անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկել:[18]

ԽՍՀՄ դատախազության տվյալներով՝ 1988-ից մինչև 1992-ի մայիսը ԼՂԻՄ-ում և Հայաստանի սահմանամերձ գյուղերում սպանվել էին 388 և բնագաղթվել 305 հազար հայ:[19]

Օգոստոսի 11-ին Ստեփանակերտում հրավիրվեց հանրահավաք, որը Հատուկ կառավարման կոմիտեից պահանջեց երեք օրվա ընթացքում վերացնել մարզի շրջափակումը և բողոք ներկայացնել ԽՍՀՄ բարձրագույն իշխանություններին՝ պահանջելով կալանքից ազատել Արկադի Մանուչարյանին:[20]

1989թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտի պետական դրամատիկական թատրոնի շենքում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը: ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեի կողմից համագումարին մասնակցեց Ս. Կուպրևը:[21]

Համագումարն ընտրեց 80 հոգուց կազմված Ազգային խորհուրդ և 21 հոգանոց նախագահություն: Ազգային խորհրդի նախագահ ընտրվեց Մարտունու կուսշրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը: Համագումարի կոչով օգոստոսի 21-ից գործադուլը դադարեցվեց: Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհուրդն իր օգոստոսի 23-ի նիստում որոշում ընդունեց արձակել Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների կողմից ընտրված Ազգային խորհուրդը: Նիստում Ա.Վեզիրովը հայտարարեց, որ «Լեռնային Ղարաբաղը մերն է, միշտ էլ կմնա մերը, որովհետև մեր թիկունքում կանգնած են և մեզ պաշտպանում են Մ.Գորբաչովն ու Ե.Լիգաչովը»:[22]

1989թ. հոկտեմբերի 19-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը քննարկվեց Լեռնային Ղարաբաղի հարցը և հաջորդ օրը՝ հոկտեմբերի 20-ին ձևակերպեց մի որոշում, որը նոր աչքակապություն էր: Ինչպես գիտենք, Գ. Տարազևիչի գլխավորած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը, հուլիսի 20-28-ը գտնվելով Արցախում, Մոսկվա վերադառնալով առաջարկել էր

---

[18] Տես Арутюнян В.Б. События в Нагорном Карабахе, ч.2, стр.87.
[19] Տես Աբրահամյան Հրանտ, ճակատագրին ընդառաջ, էջ 84-85:
[20] Տես Арутюнян В.Б. Նշվ. աշխատ. մաս 2, էջ 143-144:
[21] Տես «Խորհրդային Ղարաբաղ», 17.08.1989.
[22] Տես Бакинский рабочий, 24.08.1989.

ԼՂԻՄ-ը դուրս բերել Ադրբեջանի ենթակայությունից: Գերագույն խորհրդի նախագահությունը լսելով և քննարկելով նրա հաղորդումը՝ գտավ, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծումը հնարավոր էր հայկական և ադրբեջանական կողմերի ներկայացուցիչների միջև քաղաքական երկխոսության պայմաններում: Նաև նշվեց, որ Ադրբեջանական ԽՍՀ-ն պետք է ԼՂԻՄ-ին տա լրացուցիչ իրավունքներ, բավարարի արցախահայերի մի շարք պահանջները և ապահովի նրանց բնական կյանքը: Այդ նիստում ելույթ ունենալով՝ Զ.Բալայանը հիմնավորեց կազմված նախագծի անհիմն լինելը և պնդեց, որ առանց Արցախի ազատության, հաշտեցման մասին խոսք լինել չի կարող:[23] Մ.Գորբաչովն առաջարկեց մեկ շաբաթվա ընթացքում լրամշակել որոշման նախագիծը: Նոյեմբերի 9-ին կրկին __Ստեփանակերտ ժամանելով՝ Գ.Տարազևիչը, նույն երեկոյան հանդիպեց մարզի կուսակցական և խորհրդային մարմինների ղեկավարների հետ, ներկայացրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշման նախագիծը: Հաջորդ օրը նա հանդիպեց մարզի կուսակցական-տնտեսական ակտիվի և հասարակայնության ներկայացուցիչների հետ և լսեց ԼՂԻՄ-ում իրադրության քաղաքական կարգավորման շուրջ մարզի հայ բնակչության կարծիքը: Գ.Տարազևիչը հանդիպում ունեցավ նաև Խոջալուի ադրբեջանցիների հետ: Գ.Տարազևիչը Մոսկվա մեկնելուց առաջ լրագրողներին խոստովանեց, որ «իրավիճակը մարզում բարդ է, հակասությունը շատ խոր: Եվ ելք պետք է որոնել՝ հաշվի առնելով մարդկանց այն կածիքները, որոնք ես լսեցի այստեղ»[24]: Արցախցիները հույսեր էին կապում Գ.Տարազևիչի գլխավորած հանձնաժողովի ներկայացրած առաջարկի հետ. որոնք պետք է քննարկվեին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում: Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործում անչափ կարևոր դեր կարող էր խաղալ Ազգությունների խորհրդի հատուկ հանձնաժողովը, որը ի սկզբանե պետք է ստանար շատ բարձր կարգավիճակ և հարկավոր էր նրա աշխատանքներում ներգրավել ոչ միայն պատասխանատու աշխատողների, այլև Հայաստանի ու Ադրբեջանի, Կենտրոնի ոչ պաշտոնատար հեղինակավոր մարդկանց, լայն հասարակության ներկայացուցիչների: Հանձնաժողովը պետք է գտներ և իշխանության պետական բարձրագույն մարմնին (կարելի է նաև համաժողովրդական քննարկման) ներկայացներ ծգնաժամից դուրս գալու փոխզիջման տարբերակ, որով Ղարաբաղյան հիմնախնդիրը օրինական լուծում կստանար սահմանադրական ճանաչումով և ոչ թե հարցի լուծումը թողներ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարին, որը պատրաստ չէր վերջնական լուծում տալ այդ հարցին:

---

[23] Տես «Ավանգարդ», 25.10.1989

[24] Տես «Խորհրդային Ղարաբաղ», 12.11.1989

Լեռնային Ղարաբաղի հարցը նախատեսված էր քննարկել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի նիստում: Նոյեմբերի 27-ի առավոտյան նիստի ժամանակ Մ. Գորբաչովին հանձնվեց Հայաստանից և Արցախից ընտրված հայ պատգամավորների գրավոր դիմումը: Այնտեղ նշված էր, որ Լեռնային Ղարաբաղի ու նրա շուրջ իրավիճակը ավելի է բարդացել և Հայաստանի ու Ադրբեջանի ժողովուրդներին հասցրել է ազգամիջյան պատերազմի սահմանին: Ղարաբաղի բնակչությունը զրկված էր իր հիմնախնդիրը լուծելու հնարավորությունից: Նաև ասված էր, որ կես տարի է անցել այն ժամանակակից, երբ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարը հանձնաժողով էր ուղարկել Լեռնային Ղարաբաղ՝ հարցը տեղում ուսումնասիրելու համար: Սակայն մինչև հիմա կոնկրետ ոչինչ չէր արվել և արտաքին ճնշման հետևանքով հանձնաժողովի եզրակացությունները ենթարկվել էին հայ ժողովրդի համար անընդունելի արմատական փոփոխությունների: Նոյեմբերի 28-ի նիստում Սուրեն Հարությունյանը, Հրանտ Ոսկանյանը, Գալուստ Գալստյանը, Գոհար Ենոքյանը, Սերո Խանզադյանը և Սերգեյ Համբարձումյանը ելույթ ունենալով՝ առաջարկեցին Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման փոխզիջումային տարբերակ, սակայն մերժում ստացան: Դրանից հետո արտահայտելով որոշման նախագծի հետ իրենց անհամաձայնությունը, հայ պատգամավորները հեռացան նիստերի դահլիճից:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989թ. նոյեմբերի 28-ի՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» որոշումով ԼՂԻՄ-ը թողնվում էր Ադրբեջանական ԽՍՀ կազմում, իսկ հատուկ կառավարման կոմիտեն վերացվում էր: Փոխարենը ստեղծվում էր Ադրբեջանի հանրապետական կոմիտե, վերականգնվում էր ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի և նրա գործադիր կոմիտեի գործունեությունը, ապահովվում էր ԼՂԻՄ-ի իրական ինքնավարության կարգավիճակի բարձրացումը և բոլոր ծագող խնդիրների սահմանադրական լուծումը: ԼՂԻՄ-ում իրադրության կայունացման միջոցառումները վերահսկելու և դրանց իրականացմանն օգնելու համար ստեղծվում էր միութենական դիտորդ վերահսկիչ հանձնաժողով՝ այն ենթարկելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Արգելվում էր խախտել ժողովրդագրական իրավիճակը, գաղթականների հարցը լուծելու համար ստեղծված էր հատուկ հանձնաժողով մարզում թողնվում էր ներքին զորքերի համապատասխան զորաբաժին[25]:

Ժամանակը հանդիսանում է պատմության ամենադաժան անաչառ ուսուցիչը: Դեռևս Ադրբեջանի Գերագույն խորհրդի սեպտեմբերին գումարված

[25] Տես Правда. 29.11.1989.

նստաշրջանում մի մեծ խումբ պատգամավորներ՝ գրողներ Բախտիար Վահաբզադեն, Միրզա Իբրահիմովը, Նաբի Խազրիմ, Բագրամ Բագրամովը, Անարը, Իսմայիլ Շիխլին, «Ժողովրդական ճակատի» պարագլուխներ Էհթիբար Մահմեդովը, Աբուլֆաս Ալիևը (ապագա էլչիբեյը), կատաղորեն պահանջում էին ցրել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն ու Շահումյանի շրջանը, Ղարաբաղում ստեղծել հանրապետական կազմկոմիտե, իսկ Վոլսկուն ու Սիդորովին դատի տալ, իսկ հայերը իրենց հերթին էին դժգոհում, որ Արցախում «հատուկ կառավարման ձև մտցնելու մասին որոշումը անկենսունակ է», «անորոշ իրավական կարգավիճակով կոմիտեն ի վիճակի չէ կառավարել մարզը» և այլն: Փաստորեն Ա.Վոլսկին ու իր թիմը հայտնվել էին խաչաձև կրակի տակ:

Ցավոք, հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումից հետո Հայաստանի ղեկավարությունը ոչ թե մտածված ու ճկուն համագործակցություն էր սկսել նրա հետ, ոչ թե աջակցում էր նրան, հաճախ նույնիսկ թելադրում անելիքը և հորդորում, այլ բռնել էր մի դիրք, որ կարելի է կոչել կողմնակի դիտողի... 1989թ. մայիսի 24-ին «Կոմունիստ» թերթին տրված հարցազրույցում ահա ինչպես էր Հատուկ կոմիտեի դերն ու գործը գնահատում Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղար Ս. Հարությունյանը. «Կոմիտեն չէր դարձել կենտրոնական, կամ, ինչպես ընդունված է կոչել շատ երկրներում, պրեզիդենտական վարչության նոր լիակատար ձևը»:[26]

Ինչու չէր դարձել, երբ նրա առաջին և երկրորդ քայլերը հենց այդպիսի վարչության քայլեր էին: Այնուհետև ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում Ս.Հարությունյանը հայտարարեց, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարները չեն կարող հաճախել ԼԴԻՄ, առանց արգելքների Լեռնային Ղարաբաղում չեն կարող լինել գիտության ու մշակույթի գործիչները:[27] Պետք էր կարծել, թե Կոմիտեն էր նրանց խանգարում: Բայց չէ՞ որԿոմիտեի նախագահ Վոլսկին ինքն էր նրանց հրավիրում, համագործակցության եղանակներ հուշում ու կատարում: Հարկ է նշել, որ իր ելույթի վերջում Ս.Հարությունյանը այսպես էր եզրափակել, որ արդեն հայտնվել է մարդկանց անվստահությունը Կոմիտեի նկատմամբ:[28]

1989-ի նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը Ղարաբաղի մասին ընդունել էր մի որոշում, որը ոչնչով չէր լուծում հարցը, հակառակը, այն ավելի էր խճճում՝ Կոմիտեի կողքին ստեղծելով ինչ որ նոր մարմին (հանրապետական կազմկոմիտե), որը ինչպես հետո երևաց, պարզապես մի

---

[26] Տես Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան 1994. էջ 302:
[27] Տես նույն տեղում, էջ 302-303:
[28] Տես նույն տեղում, էջ 303

տրոյական ձի էր և մարզում վերահաստատելու Ադրբեջանի բռնությունները: Նույնիսկ այս պարագայում էլ դեռևս պահպանվում էր Վոլսկու Կոմիտեն, որը գուցե թե հնարավորություն ունենար զսպելու չար ուժերին....

Սակայն Հայաստանում անկախության փոխհարներն ու նրանց Ղարաբաղցի ծայնակցորդներն այսքանից հետո էլ հանգիստ չթողեցին Կոմիտեին: Հայոց համազգային շարժման ղեկավարները՝ իրենց առջև դրել էին մի նպատակ՝ ամեն գնով հասնել քաղաքական իշխանության: ՀՀՇ ղեկավար անդամներից ոչ մեկին «չանհանգստացրեց» այն փաստը, որ «Հատուկ կառավարման կոմիտեն» Վոլսկու գլխավորությամբ կանգնած է լուծարման փաստի առաջ: Նրանք գիտակցաբար չէին ցանկանում տեսնել ու գնահատել «Հատուկ կառավարման կոմիտեի» դրական գործունեությունը և դերը: Չէ որ իրենց նեղ և սնանկ քաղաքական նպատակները հակասում էին հայ ժողովրդի բուն ազգային շահերին: Եվ շուրջ մեկ ամիս հետո Միխայիլ Գորբաչովը վերացրեց Կոմիտեն՝ դա պատճառաբանելով այսպես. Կոմիտեն ստեղծված էր հայ-ադրբեջանական հակամարտությունը մեղմելու. գլխավոր հարցի լուծումը մոտեցնելու նպատակով: Ադրբեջանական կողմն այն թշնամաբար էր ընդունում: Դա դեռևս հասկանալի է: Սակայն հայկական կողմի՞ թշնամանքը... Այս դեպքում էլ ինչ իմաստ ունի Կոմիտեի գոյությունը:[29]

1990թ. Բաքվի դեպքերից հետո Գորբաչովի նոր որոշումով լուծարքի ենթարկվում ԼՂԻՄ-ի կառավարման Հատուկ կոմիտեն, Վոլսկու կոմիտեն:

---

[29] Տես Բագրատ Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան 1994, էջ 303: